ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/83

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի կողմից 13.09.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.09.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 20.06.2018թ. հրապարակվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքի 1,3 կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատման և Տ-5-25, Մ-3-Լեռնապատ

ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման 19.06.2018թ. բաց մրցույթի հանձնաժողովի կողմից հաստատված «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» գնման ընթացակարգով հայտարարությունը:

31.07.2018 թ. տեղի ունեցած հայտերի բացման արդյունքում գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, առաջին տեղ զբաղեցնող ճանաչած «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում է կայացվել հարցում ներկայացնել հարկային մարմին՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները պարզելու համար՝ համաձայն գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. թիվ 2 արձանագրության, ինչպես նաև 15.08.2018 թվականին էլ. համակարգի միջոցով Ընկերությունը ստացել է ծանուցում՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցնելու վերաբերյալ, և առաջարկվել էր 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում էլ. փոստով ներկայացնել «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որը «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել էր 16.08.2018 թվականին:

Հարկային մարմինը, սակայն, ներկայացրել է տեղեկատվություն, որի համաձայն Ընկերությունն ունի ժամկետանց պարտավորություն, չնայած այն հանգամանքին, Ընկերությունն իրականում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չի ունեցել:

Ընկերության հայտի մերժման մասին պաշտոնական գրություն չի ստացվել:

04.09.2018 թ. գնահատող հանձնաժողովի 2.ա) որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ճանապարհ» ՍՊԸ-ն, իսկ 2.բ) որոշմամբ որոշում է կայացվել տվյալ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին անգործության ժամկետի ավարտից հետո՝ համաձայն գնահատող հանձնաժողովի 04.09.2018 թ. թիվ 5 արձանագրության, որից հետո էլ հրապարակվել է հայտարարություն «Ճանապարհ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին:

Պարզելով, որ հարկային մարմնի կողմից ներկայացված ժամկետանց պարտավորությունը վերաբերում է միայն դրոշմանիշային վճարին (որն ամբողջությամբ մարվել է 22.08.2018թ.), Ընկերությունը ներկայացրել է հարկային մարմնի վերադասին բողոք այն հիմքով, որ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը չի դիտվում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն և էլեկտրոնային բազայում Ընկերության մոտ ժամկետանց պարտավորությունները բացակայում են, հետևաբար ժամկետանց հարկային պարտավորության մասին տեղեկատվություն չէր կարող տրամադրվել գնահատող հանձնաժողովին:

Արդյունքում, Բողոքարկման հանձնաժողովը որոշել է, որ Ընկերության պարագայում գնումների գործընթացի մասնակցության առումով դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը ենթակա չէ դիտարկման որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող ժամկետանց հարկային պարտավորություն՝ համաձայն 10.09.2018 թ. գրության:

Հետևաբար, Ընկերության հայտը ենթակա չէր մերժման, Ընկերությունը պետք է ճանաչվեր ընտրված մասնակից և որոշում ընդունվեր վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ, քանի որ հայտերի բացման ժամանակ Ընկերությունը չի ունեցել հարկային մարմնի կողմից վերահսկով եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ընկերությունը գտնում է, որ վերջինիս հայտը մերժելով և վերջինիս հետ պայմանագրի կնքման որոշում չընդունելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հետևյալ նորմերը՝

«5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված

պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:...»:

Ընկերությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, թերությունները շտկելու հնարավորություն չտալով Ընկերությանը, նաև խախտել է ստորև ներկայացվող նորմերը.

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման թիվ մեկ հավելվածով սահմանված գնումների գործընթացի կարգի համաձայն.

«43. Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

...

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ...

44. Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ..., և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝

անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից... ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի... գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...»:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Ճանապարհ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները,
2. դադարեցնել «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը,
3. ընդունել որոշում «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.09.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.09.2018թ. թիվ 08/15.3/15030-18 գրությամբ հայտնել է, որ «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ՝ Ընթացակարգ) 2-րդ չափաբաժնի մասով «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություններ 840 000 ՀՀ դրամի չափով, սակայն 2018թ. սեպտեմբերի 12-ի թիվ 86DE-C5D6-13A0 գրությամբ ստացվել է տեղեկանք հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովից «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարության» ՓԲԸ-ի պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն: «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով գնումների կազմակերպման կարգի 44-րդ և 45-րդ կետերը, շարունակել է իր գործընթացը օրենսդրության պահանջներին համապատասխան:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.09.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքի 1,3 կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատման և Տ-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 30.07.2018թ. հայտ է ներկայացրել «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 20.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 840 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի 13.09.2018թ. բողոքը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 17.09.2018թ. թիվ 08/15.3/15030-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն

ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքի 1,3 կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատման և Տ-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***30.07.2018թ.*** հայտ է ներկայացրել «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 20.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 840 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 22.08.2018թ. թիվ 143 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 30.07.2018թ. դրությամբ ունի 840 000 ՀՀ դրամ ***դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն:***

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 30.07.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 30.07.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոքի քննության շրջանակներում «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի բողոքին կից, ինչպես նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 17.09.2018թ. թիվ 08/15.3/15030-18 գրությանը կից ներկայացրել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանն ուղղված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 12.09.2018թ. գրությունը, որով ամրագրվել է հետևյալը.

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված են պետական հարկերը և պետական վճարները, որոնց նկատմամբ հսկողությունը վերապահված է հարկային մարմնին:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են հարկային եկամուտները:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ *դրոշմանիշային վճարը* զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն *օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է*: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մասնավորապես՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից

ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունը պարտավորությունները կատարելիս առաջնորդվել է բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելու հանգամանքը, ուստի «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարության» ՓԲԸ-ի պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, անհրաժեշտ է չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. տրամադրված եզրակացությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 22.08.2018թ. թիվ 143 տեղեկանքը, 30.07.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանն ուղղված

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 12.09.2018թ. գրությունը, գտնում եմ, որ «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրված «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարության» ՓԲԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը, որն ըստ էության հանդիսանում է դրոշմանիշային վճար, տվյալ պայմաններում չի դիտարկվում որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն, հետևաբար գտնում եմ, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարության» ՓԲԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքի պահանջին, ապա գտնում եմ, որ այն ենթակա է մերժման, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 5-6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի

միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարության» ՓԲԸ-ի կողմից 13.09.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

- Պարտավորեցնել «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Ճանապարհ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները,
- Պարտավորեցնել «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը.
- Պարտավորեցնել «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական»

ՓԲԸ-ի հայտը սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

- «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ